

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական
թիվ 371-Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի՝
թիվ ____ -Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարար՝

----- Արթուր Զավադյան
2011 թվականի դեկտեմբերի ____

----- Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի ____

ԴԻՎԻՍԱ ԷՅ ԷՄ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Դիվիզա Էյ ԷՄ ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան պողոտա 5, շինություն 11

1. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝

1) ներկայացնում են ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու հիմունքները, ինչպես նաև ընտրված և էական գործառնությունների ու իրադարձությունների նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվություն:

2) բացահայտում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (այսուհետ նաև՝ ՖՀՄՍ) պահանջվող տեղեկատվությունը, ինչը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների ձևերում:

2. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ինչպես թվային, այնպես էլ պատմողական և նկարագրական տեղեկատվության ձևով բացահայտվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի համադրելի տեղեկատվությունը:

3. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներառում են սույն հավելվածի 4-ից 51-րդ կետերով նախատեսված ծանոթագրությունները:

4. «Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում» ծանոթագրությունում բացահայտվում են ներդրումային ընկերության կազմակերպական-իրավական ձևը և ներդրումային ընկերության վերաբերյալ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (այսուհետ՝ ՀՀՄՍ) 1-ով սահմանված այլ տեղեկատվություն: Տեղեկությունները ներկայացվում են ըստ հետևյալ բաժինների՝

1) ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

ա. ներդրումային ընկերության հիմնական գործունեությունը,

ԴԻՎԻՍԱ ԷՅ ԷՄ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնական գործունեությունը ներդրումային ծառայությունների մատուցում է՝

ա) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը,

բ) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը,

բ. գործարար միջավայրը,

Ընկերության գործարար միջավայրն է՝

ա) ՀՀ Կենտրոնական բանկ,

բ) ՀՀ Բանկեր,

գ) Հայաստանի և միջազգային ֆինանսական շուկաներ,

դ) ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

գ. եթե ներդրումային ընկերությունը խմբի անդամ է, ապա խմբի իրավական կառուցվածքը:

«Դիվիզա Էյ ԷՄ» ՓԲԸ ներդրումային ընկերությունը հանդիսանում է ԴԻՎԻՍԱ ՅՈՒ ՔԵՅ ԼԻՄԻԹԵԴ Բրիտանական Ընկերության խմբի անդամ և չունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:

2) ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Դիվիզա Էյ ԷՄ» ՓԲԸ-ը գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 10.07.2012թ.-ին, իսկ վերաձևակերպումը կատարվել է 22.09.2015թ.-ին: Ընկերության լիցենզիայի համարն է թիվ 0011:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0019, Բաղրամյան պողոտա 5, շինություն 11:

ա. խորհրդի կառուցվածքը, կազմը,

Ընկերությունը խորհուրդ չունի: Կառավարման մարմիններն են՝

- բաժնետերերի ընդհանուր ժողովը
- տնօրենը:

բ. փնտրիչության կառուցվածքը, կազմը,

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում գործունեության ղեկավարման հարցերը, որոնք Կանոնադրությամբ վերապահված չեն ընդհանուր ժողովին:

գ. սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվեգրու ժամանակաշրջանի վերջում,

«Դիվիսա ԷՅ ԷՄ» ՓԲԸ Ընկերության սեփականության կառուցվածքը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

31.12.2017թ. դրությամբ Ընկերության բաժնետերերի քանակը 1 է՝ իրավաբանական անձ ԴԻՎԻՍԱ ՅՈՒ ՔԵՅ ԼԻՄԻԹԵԴ Ընկերությունը, գրանցված Մեծ Բրիտանիայում:

դ. նշանակալից մասնակիցների անունները/անվանումները,

Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում՝ ԴԻՎԻՍԱ ՅՈՒ ՔԵՅ ԼԻՄԻԹԵԴ՝ ում սեփականության իրավունքով պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%:

ե. ղեկավարների վարձատրության քաղաքականությունը,

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով:

զ. արտաքին աուդիտին վճարները:

«Դիվիսա ԷՅ ԷՄ» ՓԲ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է «Աուդիտ Սերվիս» Ընկերության կողմից: Արտաքին աուդիտի ծառայությունների վճարումը կատարվել է նշված Ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն:

5. «Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը» ծանոթագրությունում ներդրումային ընկերությունը բացահայտում է ներդրումային ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ առնվազն հետևյալ հոդվածների վերաբերյալ.

1) ֆինանսական հաշվետվությունների պարաստումը և ներկայացումը,

«Դիվիսա ԷՅ ԷՄ» ՓԲԸ իր հաշվապահական հաշվառումը վարել է և ֆինանսական հաշվետվությունները կազմել է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգի, Ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ինչպես նաև գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի համաձայն:

2) համախմբման սկզբունքները (համախմբման դեպքում),

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը,

Ընկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով (օրական կտրվածքով)՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման սկզբունքով՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները, ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4) արտարժույթային գործառնությունների հաշվառումը,

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում, ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արժույթով, որն էլ հանդիսանում է հաշվետվական արժույթ: Արտարժույթով արտահայտված գործառնությունները Ընկերությունը գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքը: Սկզբնական ճանաչումից հետո հոդվածները վերազանահատվում են տվյալ օրվա փակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային դրական կամ բացասական տարբերությունները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի եկամուտ և ծախս:

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված),

Ընկերությունը հարկերի (շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի.) վճարների գծով հաշվառումը վարում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից):

Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվեգրում է շահութահարկի պարտավորությունը շահույթի նկատմամբ, և հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

6) ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

Ընկերությունը ֆինանսական գործիքները՝ ակտիվները և պարտավորությունները, հաշվեկշռում ճանաչում է միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- դեբիտորական պարտքեր:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռք բերման պահին՝ Ընկերության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, ինչպես նաև առաջնորդվում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով:

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում հաշիվների մնացորդներից և ժամկետային ավանդներից, որոնց ձևակերպումները կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

8) շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,

Ընկերությունը նման դասի արժեթղթերով գործարքներ չի իրականացրել, իսկ այդպիսի արժեթղթեր տիրապետելու դեպքում, դրանք կհանդիսանան որպես արժեթղթեր, որոնք ձեռք են բերվում կամ առաջանում են հիմնականում գների կամ դիվերային հավելագների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով: Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ կհաշվառվեն սկզբնական արժեքով և հետագայում կվերաչափվեն իրական արժեքով ելնելով՝ գործող շուկայական գներից:

9) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,

Ընկերությունը նման դասի արժեթղթերով գործարքներ չի իրականացրել, իսկ այդպիսի արժեթղթեր տիրապետելու դեպքում, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից շահույթների (վնասների) ճանաչման մոտեցումը հետևյալն է՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ/ծախս կամ ուղղակիորեն արդյունք սեփական կապիտալում:

Այս դասի արժեթղթերը ձեռք են բերվում անորոշ ժամանակ պահելու նպատակով և կարող են վաճառվել՝ կախված իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի և գների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում իրական արժեքի գծով ճշգրտումներ ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնվում է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը կորոշվի գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ,

Ռեպո համաձայնագրերի հիման վրա գործարքներ կնքելու դեպքում, համաձայնագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները Ընկերությունը հաշվառում է որպես տրամադրված փոխառություններ, իսկ դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Իսկ ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ, և դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

11) ածանցյալ ֆինանսական գործիքներ,

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ՝ 31.12.17թ. Ընկերությունը չունի բաց դիրքեր:

12) փոխառություններ՝ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին,

13) փոխառությունների ու դեբիտորական պարտքերի արժեգրվման գծով կորուստների որոշման և անհուսալի փոխառությունների ու դեբիտորական պարտքերի դուրսգրման հիմունքը,

14) տոկոսների հաշվեգրման դադարեցումը ,

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեգրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հաշվեգրվի:

15) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը,

Ընկերությունը ֆինանսական մարման ժամկետով արժեթղթերը դասակարգում է որպես մինչև մարման ժամկետ պահվող, երբ նա մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կարուստների պահուստները:

16) հեջի հաշվապահական հաշվառումը,

17) ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը,

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումներ:

18) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, Ընկերությունը սկզբնապես չափում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով, իսկ երբ հիմնական միջոցի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն կտարբերվի՝ ապա այն կհաշվառվի վերագնահատված արժեքով: Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Ամորտիզացիոն մասհանումները կատարվում է ելնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ժամկետից:

Հիմնական միջոցների (համակարգչային տեխնիկայի) միավորի օգտակար ծառայությունը վերանայվել է մասնագիտացված անկախ գնահատող Ընկերության կողմից և 30.06.14թ. դրությամբ ներկայացվել են իրական արժեքները և օգտակար ծառայությունների նոր ժամկետները:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը հաշվառում է ձեռք բերման արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են հաշվեկշռային արժեքով՝ սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

19) հաճախորդների միջոցներ,

Դիվիզա Էյ Էմ Ընկերության հաճախորդներին սպասարկելու համար իրականացվել են բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները նոր առցանց MT4 հարթակի ծրագրային կարգավորումները՝ համաձայն գործող սպասարկման պայմանների: Ընկերությունը տրամադրում է իրացվելիություն ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ինստիտուցիոնալ հաճախորդներին:

20) ներդրումային ընկերությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր,

Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չի թողարկել պարտքային արժեթղթեր:

21) փարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ,

Ընկերությունը հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը հանգեցնող գործառնությունների տարբերակումը պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ առաջացնող գործառնությունները իրականացնում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն:

22) ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կապարվող հարկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը,

23) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելվածար կամ էմիսիոն եկամուտ (հակառակ դեպքում՝ որպես զեղջ):

24) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

25) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ճանաչված գումարները և կա մտադրություն վերջնահաշվարկն իրականացնել զուտ հիմքով, կամ իրացնել ակտիվն ու մարել պարտավորությունը միաժամանակ:

26) ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

Ակտիվների վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

27) փրեդեկավորություն սեզմենտների վերաբերյալ:

6. Ծանոթագրություն 2-ում բացահայտվում է կազմված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և ներդրումային ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

«Դիվիսա ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են միջազգային ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ստանդարտների ներքո և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

7. «Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ» ծանոթագրությունը ներկայացնում է տոկոսային և նմանատիպ եկամտի, ծախսերի հիմնական տարրերը հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար՝ համաձայն սույն աղյուսակի՝

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
1)	Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	8958	5557
2)	Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	6707	467
3)	Տոկոսային եկամուտներ փոխառություններից	80	279
4)	Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից		
5)	Տոկոսային եկամուտներ սվոպից		
6)	Այլ տոկոսային եկամուտներ		
	Ընդամենը	15745	6303
2	Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
1)	Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց		
2)	Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով		
3)	Տոկոսային ծախսեր սվոպի գծով		
4)	Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց		
5)	Այլ տոկոսային ծախսեր		
	Ընդամենը	0	0
3	Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	15745	6303

8. «Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր» ծանոթագրությունը ներկայացնում է կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների և ծախսերի հիմնական տարրերը հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար՝ համաձայն սույն աղյուսակի.

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
1)	Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից		
2)	Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից		28945
3)	Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից		
4)	Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից		156925
5)	Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից	622469	
6)	Պահառության գործունեությունից		
7)	Այլ միջնորդավճարներ		
8)	Ընդամենը	622469	185870
2	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		

1)	Միջնորդավճարների գծով ծախսեր	238262	1825
2)	Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	384207	184045

9. «Ծանոթագրություն 5. Եկամուտ շահութաբաժիններից» ծանոթագրությունը ներկայացնում է շահութաբաժինների հիմնական տարրերը հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար՝ համաձայն սույն աղյուսակի.

	Շահութաբաժիններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ		
2	Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ		
3	Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահութաբաժիններ		
4	Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահութաբաժիններ		

10. «Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից» ծանոթագրությունը ներկայացնում է առևտրային գործառնություններից զուտ եկամուտների հիմնական տարրերը հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար՝ համաձայն սույն աղյուսակի.

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
2)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
	Ընդամենը	0	0
2	Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ		
1)	Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
2)	Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
	Ընդամենը	0	0
3	Այլ առևտրային գործունեություն		
1)	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
2)	Զուտ եկամուտներ ներդրումային այլ ծառայությունների գծով		
3)	Աճանցյալ գործիքների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
4)	Արժեթղթերով գործարքներից այլ զուտ եկամուտ		
	Ընդամենը	0	0
4	Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ		
1)	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	-2038	-328
2)	Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	1833	860
	Ընդամենը	-205	532
5	Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	-205	532

11. «Ծանոթագրություն 7. Ընդհանուր վարչական ծախսեր» ծանոթագրության տարրերն են՝

	Ընդհանուր վարչական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	78365	70007
2	Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով		
3	Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	2027	175
4	Անձնակազմի այլ ծախսեր	213	35
5	Գործառնական վարձակալության գծով ծախսեր	2600	2597
6	Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	658	568
7	Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	650	500
8	Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1566	1299
9	Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	1939	478
10	Տրանսպորտային ծախսեր		
11	Այլ վարչական ծախսեր*	20579	7159
12	Ընդամենը	108597	82818

12. Եթե 11 -րդ կետի աղյուսակի «Այլ վարչական ծախսերը» տողը էականորեն մեծ է, ապա բացահայտվում են այլ ծախսերի բաղադրիչները:

* Այլ վարչական տողում ներկայացված գումարով 13259,0 հազ.դրամը իրենից ներկայացնում է հարթակի տեխնիկական սպասարկման ծախս:

13. Ծանոթագրություն 8-ում բացահայտվում են աշխատակիցների միջին թվաքանակը և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափը:

Ընկերության միջին ամսական աշխատողների քանակը 31.12.17թ. դրությամբ կազմել է ինը մարդ:

14. «Ծանոթագրություն 9-ա. Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրության տարրերն են՝

	Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Հասարակական կապերի գծով ծախսեր	14	137
2	Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	3197	3171
3	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	167	166
4	Այլ ծախսեր	126	621
5	Ընդամենը	3504	4095

Եթե 9/ա-րդ կետի աղյուսակի «Այլ ծախսեր» տողը էականորեն մեծ է, ապա բացահայտվում են այլ ծախսերի ձևավորման բաղադրիչները:

14/1. «Ծանոթագրություն 9-բ. Այլ գործառնական եկամուտներ» ծանոթագրության տարրերն են՝

	Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան

1	Հիմնական միջոցների օտարումից օգուտներ	363	1360
2	Պահուստների հակադարձում	5817	2860
3	Այլ օգուտներ	0	70
5	Ընդամենը	6180	4290

15. «Ծանոթագրություն 10. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)» ծանոթագրության տարրերն են

	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից		
2	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից		
3	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներից		
4	Այլ դուստր ընկերություններում ներդրումներից		
5	Ընդամենը	0	0

16. «Ծանոթագրություն 11. Շահութահարկի գծով ծախս» ծանոթագրությունում բացահայտվում են ընթացիկ տարվա շահութահարկի և հետաձգված շահութահարկի գծով ծախսի հանրագումարը և ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտով պահանջվող բացահայտումները: Ծանոթագրություն 12-ով բացահայտվում են նաև նախորդ միջանկյալ ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախսի ճշգրտված գումարները:

	Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Ընթացիկ հարկի գծով ծախս	50090	
2	Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները		
3	Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	9138	-9028
4	Ընդամենը	59228	-9028

17. Ծանոթագրություն 12-ում բացահայտվում է նաև՝

- գործող օրենսդրության համաձայն կիրառվող շահութահարկի դրույքաչափը,
- շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
1	Շահույթը մինչև հարկումը	-	x	-
2	Շահութահարկ՝ դրույքաչափով	20%	x	x
3	Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-
4	Չհարկվող եկամուտներ	(x)	(x)	(x%)
5	Չնվազեցվող ծախսեր	x	x	x%
6	Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	x/(x)	x/(x)	x/(x)
7	Շահութահարկի գծով ծախս			

3) ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

		Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ
1	Հեղաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝				
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով				
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով				
3)	Հիմնական միջոցների գծով				
4)	Այլ ակտիվների գծով				
5)	Ստեղծված պահուստների գծով				
6)	Այլ պարտավորությունների գծով	9028	-9028		0
2	Հեղաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝				
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով				
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով				
3)	Հիմնական միջոցների գծով				
4)	Այլ ակտիվների գծով				
5)	Այլ պարտավորությունների գծով		111		111
3	Չուր հեղաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	9028	-9138	0	-111

4) ՀՀՄՍ 12-ով պահանջվող այլ բացահայտումներ:

18. «Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ» ծանոթագրությունում բացահայտվում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀՄՍ 33 «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ» ստանդարտի: Բացահայտումները ներկայացվում են նաև այն դեպքում, երբ բացահայտվող գումարները բացասական են (մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս):

	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո		
2	Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով		()
3	Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)		
4	Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը		
5	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
6	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրսացված շահույթ		

19. «Ծանոթագրություն 14 Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում» ծանոթագրության տարրերն են.

Ընկերությունը իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

1) «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Կենտրոնական բանկում» ըստ սույն ենթակետում բերված աղյուսակի: Այս ծանոթագրության մեջ պետք է բացահայտվեն կանխիկ դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործման որևէ սահմանափակման առկայությունը, այն դրամական միջոցների և դրանց համարժեքների էական գումարների մնացորդները, որոնք մատչելի չեն խմբի օգտագործման համար: Ընդ որում, այդ բացահայտումները պետք է ուղեկցվեն ղեկավարության մեկնաբանություններով:

	Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Կենտրոնական բանկում	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր		
2	Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ Կենտրոնական բանկում		
3	Դեպոնացված միջոցներ Կենտրոնական բանկում		
4	Հաշվեգրված տոկոսներ		
5	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում		

2) «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառվում են դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում»: Այս ծանոթագրությամբ բացահայտվում են «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության» մեջ «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում» տողերում ներառված հոդվածները:

Դրամական միջոցների մնացորդ՝
 Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում՝ 01.01.2017 1 330 782 հազ.դրամ
 Հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ 31.12.2017 1 503 232 հազ.դրամ

20. «Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Ընթացիկ հաշիվներ		
1)	Հայաստանի Հանրապետության բանկերում	1503151	1330781
2)	Այլ բանկերում		
3)	Դեպոնացված հաշիվներ բանկերում		
4)	Հաշվեգրված տոկոսներ	81	1
5)	Ընդամենը	1503232	1330782
2	Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ		
	Կենտրոնական բանկում՝		
1)	տրամադրված փոխառություններ և ավանդներ		
	ռեպո (հետզնման) պայմանագրեր		
	այլ		
	Բանկերում՝		
2)	տրամադրված փոխառություններ և ավանդներ	366050	79073
	ռեպո (հետզնման) համաձայնագրեր		
	արժեթղթերի փաթեթի կառավարում		
	այլ		
3)	Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում		
	տրամադրված փոխառություններ և ավանդներ		
	ռեպո (հետզնման) համաձայնագրեր		
	արժեթղթերի փաթեթի կառավարում		
	այլ		
4)	Հաշվեգրված տոկոսներ	6434	3666
5)	Ընդամենը	372484	82739

3	Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	()	()
4	Չուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1875716	1413521

21. Ծանոթագրություն 16-ում բացահայտվում են ընթացիկ հաշիվների և ավանդների օգտագործման գծով առկա սահմանափակումները, դրանցում առկա այն էական գումարների մնացորդները, որոնք մատչելի չեն օգտագործման համար (դատարանի որոշմամբ արգելանքի տակ գտնվող գումարները, պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող գումարները, այլ):

Ընկերությունը ընթացիկ հաշիվների և ավանդների օգտագործման գծով հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի ունեցել որևէ սահմանափակումներ:

22. «Ծանոթագրություն 17. Միջև մարման ժամկետը պահվող ներդրումներ» ծանոթագրության տարրերն են՝

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Պետական արժեթղթեր		
1)	Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր, այդ թվում՝		
	գանձապետական պարտատոմսեր	156483	24550
	կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
2)	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝		
	գանձապետական պարտատոմսեր		
	կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
3)	ԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝		
	գանձապետական պարտատոմսեր		
	կենտրոնական բանկի պարտատոմսեր այլ		
4)	Հաշվեգրված տոկոսներ	4061	114
	Ընդամենը պետական արժեթղթեր	160544	24664
2	Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	Ցուցակված	չցուցակված
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝		
	երկարաժամկետ պարտքային գործիքներ		
	կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ		
2)	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի, այդ թվում՝		
	երկարաժամկետ պարտքային գործիքներ		
	կարճաժամկետ պարտքային գործիքներ այլ		
3)	ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝		
	երկարաժամկետ պարտքային գործիքներ		
	կարճաժամկետ պարտքային գործիքներ		

	այլ				
4)	Հաշվեգրված տոկոսներ		-		-
	Ընդամենը				
3	Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	Ցուցակված	չցուցակված	Ցուցակված	չցուցակված
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝				
	երկարաժամկետ պարտքային գործիքներ				
	կարճաժամկետ պարտքային գործիքներ				
	այլ				
2)	ԲԲԲ+ /Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝				
	երկարաժամկետ պարտքային գործիքներ				
	կարճաժամկետ պարտքային գործիքներ				
	այլ				
3)	Հաշվեգրված տոկոսներ		-		-
	Ընդամենը		()		()
4	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեգրվում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 8)				
5	Ձուտ ներդրումներ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներում		160544		24664

23. Ծանոթագրություն 18-ում բացահայտվում են «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների» հաշվեկշռային (ամորտիզացված) արժեքները և իրական արժեքները:

Արժեթղթերի պորտֆելի դրությունը առ 31.12.2017

N	Արժեթղթի տարբերակիչ	Արժեթղթի ծավալն անվանական արժեքով հազ.դրամ	Արժեթղթի հաշվեկշռային արժեք հազ.դրամ
1	AMGN.....	23,000	23,519
2	AMGT.....	139,500	137,025
	Ընդամենը	162,500	160,544

24. Ծանոթագրություն 19/ա-ում բացահայտվում են «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների» դասում տեղի ունեցած վերադասակարգումների (մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների դասակարգումը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և հակառակը) ծավալը և պատճառները:

25. Ծանոթագրություն 19/բ-ում բացահայտվում են «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների» դասում հաշվառվող ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը՝ ըստ սույն ծանոթագրությամբ տրված արժեթղթի տիպերի (Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական այլ արժեթղթեր և այլն) և ըստ գործարքի երկրորդ կողմի պատկանելիության (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բանկեր, ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններ, այլ ռեզիդենտներ և այլն):

26. «Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում» ծանոթագրությունում պետք է բացահայտվեն ներդրումային ընկերության կողմից վերահսկվող անձանց կապիտալում իրականացված ներդրումների շարժը հաշվետու ժամանակաշրջանում:

	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների շարժը	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում
1	Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	
2	Ավելացում	
3	Օտարում (վաճառք)	()
4	Արժեքի արժեգրվում	()

5	Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	-
---	---------------------------------	---

	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներ		
2	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներ		
3	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներ		
4	Այլ դուստր ընկերություններում ներդրումներ		
5	Շահաբաժիններ		
6	Ընդամենը	-	-

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում որևէ ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում չի իրականացրել:

27. «Շտառագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ» ծանոթագրության տարրերն են՝

Հիմնական միջոցներ

	Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխարդամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հ/միջոցների գծով կապիտալ ներդրումներ կապիտալ ներդրումներ	Վարձակալված հ/մ գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
1	Ավելանական արժեք							
2	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	8,865	-	4,019	-	-	12,884
3	Ավելացում	-	1,343	-	1	-	-	1,344
4	Օտարում	()	-	()	-	()	()	-
5	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
6	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
7	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	10,208	-	4,020	-	-	14,228
8	Ավելացում	-	237	-	-	-	-	237
9	Օտարում	()	(2,047)	()	-	()	()	(2,047)
10	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
11	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
12	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
13	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	8,398	-	4,020	-	-	12,418
14	Կուտակված մաշվածություն							
15	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	8,013	-	2,392	-	-	10,405
16	Ավելացում	-	651	-	212	-	-	863
17	Օտարում	()	-	()	-	()	()	-
18	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
19	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
20	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	8,664	-	2,604	-	-	11,268
21	Ավելացում	-	657	-	185	-	-	842
22	Օտարում	()	(2,008)	()	-	()	()	(2,008)
23	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
